ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/12788-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-528-09.03.2023-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 412-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-528-09.03.2023-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանի և Թագուհի Ղազարյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել «Կինեմատոգրաֆիայի մասին» գործող օրենքով նախատեսված հավաստագիր տրամադրելու, մատակարարի միջնորդավորված ծառայություններից օգտվելու և ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու հաշվարկային մոտեցումը: Նշված կարգավորումն առաջարկվում է փոխարինել ներդրումների մասնակի վերադարձի (cashback) միջոցով պետության աջակցության ձևով, որով սահմանվում է, որ ֆիլմարտադրողի (ներդրողի) ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների և ծառայությունների համար կատարված դրամական ծախսերը կարող են մասնակի վերադարձվել այն ծախսային 20%-ի հաշվարկով, որը կատարվել է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անձանցից, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի մի շարք դիտարկումներ՝

1. Նախագիծն ունի լրացուցիչ հիմնավորման կարիք՝ բարձրացված խնդիրների համատեքստում:

Հարկ ենք համարում նշել, որ նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն ունեն առանցքային նշանակություն, հետևաբար իրավական ակտի հիմնավորման մեջ պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը, կարգավորման նպատակը, բնույթը և ակնկալվող արդյունքը: Այնինչ, տվյալ դեպքում նախագծին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ լիարժեք ձևով գնահատել ներկայացված նախագծի արդյունավետությունը, քանի որ բացակայում են ընթացիկ իրավիճակի, խնդիրների, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության, կարգավորման նպատակի, բնույթը և ակնկալվող

արդյունքի համապատասխան վերլուծությունները, ինչն էական նշանակություն և կարևորություն ունի ներկայացված առաջարկությունների հիմնավորվածությունը լիարժեք ձևով գնահատելու համար:

Նախագծի հիմնավորումից պարզ է դառնում, որ չի ներկայացվել միջազգային փորձը, այլ պարզապես նշվել է, որ նախագծի ընդունումը «Օրենքի նախագիծը ընդունելու արդյունքում առավել կբարձրանա Հայաստանում կինոարտադրության ոլորտում ներդրումների գրավչությունը, ինչն էլ կնպաստի կինոարդյունքի որակի բարձրացմանը և ոլորտի զարգացմանը:»: Սակայն այն չի ընդգրկում և արծարծում Հայաստանի Հանրապետությունում կինոարտադրության գործունեությունը կարգավորող իրավահարաբերությունների ամրագրման ու սահմանման բուն անհրաժեշտությունը, հստակ նպատակները, հիմնավոր կարևորությունը և հեռանկարները:

Մինչդեռ գտնում ենք, որ անհրաժեշտ էր բացահայտել ոլորտի ընթացիկ իրավիճակը և տվյալ ոլորտում իրականացվող քաղաքականությունը, խնդիրները, առհասարակ առաջարկվող կարգավորման անհրաժեշտությունը, վերլուծել նախատեսվող կարգավորումների ռիսկային գործոնները, որից հետո միայն կարելի է անցնել օրենքում առաջարկվող կարգավորման ներդրմանը:

2. Նախագծի վերնագրից և 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջների:

3. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է. «**ներդրումների մասնակի վերադարձ (cashback)**՝ ֆիլմարտադրողների կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անձանցից, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա **իրական շահառու հանդիսացող անձանցից,** ձեռք բերված ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների և ծառայությունների համար կատարված դրամական ծախսերի մասնակի հետ վերադարձ.» հասկացությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ «**շահառու՝** Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտ, որին, սույն օրենքի համաձայն, հատկացվում է ֆինանսավորում.»: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե որոնք են «**իրական շահառու**» հանդիսացող անձինք:

4. Առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում, օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի նոր լրացվող «23.1)» մասում **(cashback)** տերմինը փոխարինել **(cash rebate)** տերմինով, որն ավելի կիրառելի է կինոարդյունաբերության ոլորտում:
5. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել, որ ներդրումների մասնակի վերադարձի տրամադրման, մերժման, դադարեցման և բողոքարկման կարգն ու պայմանները հաստատելու է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվում է «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել «Ներդրումների մասնակի վերադարձը կամ դրա մերժումը կամ դադարեցումը, հետգանձումը, համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրումը և դրա դադարեցումը, վարձութային վկայականի տրամադրումը և դրա գործողության դադարեցումը» ձևակերպմամբ, որով կարգավորվում են ներդրումների մասնակի վերադարձի կամ դրա մերժման կամ դադարեցման, հետգանձման, համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման և դրա դադարեցման, վարձութային վկայականի տրամադրման և դրա գործողության դադարեցման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսված «Ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը, մերժումը, դադարեցումը, հետգանձումը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում է, որ ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը և ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկ ու ձևաչափը, ինչպես նաև վերադարձը մերժելու, դադարեցնելու և պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) և բողոքարկելու ընթացակարգերը սահմանվում են «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Ներդրումների մասնակի վերադարձի կամ դրա մերժման կամ դադարեցման, հետգանձման, համատեղ արտադրության կարգավիճակի տրամադրման և դրա դադարեցման, վարձութային վկայականի տրամադրման և դրա գործողության դադարեցման հետ կապված հարաբերությունների՝ նախագծով առաջարկվող լուծումներն առաջարկում ենք ներդաշնակեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի հետ՝ միաժամանակ քննարկելով նաև որոշումների

բողոքարկման ենթաօրենսդրական կարգի նպատակահարմարությունը սեփականության պաշտպանության և պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Կարծում ենք, անհրաժեշտ է որոշակիացնել նաև խնդրո առարկա հարաբերություններում որոշումների կայացման հիմքերը և դրանց կատարման կառուցակարգերը՝ հատկապես ներդրումների մասնակի վերադարձի (cashback) գումարի՝ պետական բյուջե հետգանձման մասով:

6. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետում առաջարկվում է օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5) իրականացնում է պետական բյուջեից և դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման **մոնիտորինգ** (մշադիտարկում).»: Այս ձևակերպումն առաջացնում է հիմնավորման անհրաժեշտություն, քանի որ գործող օրենքում առկա սահմանումը ապահովում է պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցների վերահսկողություն, իսկ առաջարկվող խմբագրությամբ Ազգային մարմինը կարող է իրականացնել մոնիտորինգ, և անհասկանալի է պետական ֆինանսների ոչ նպատակային օգտագործման դեպքում Ազգային մարմնի լիազորությունները:
7. Նախագծի 5-րդ հոդվածում «12.1.» թիվը փոխարինել «12.1)» թվով՝ նկատի ունենալով, որ լրացվում է կետ, այլ ոչ թե մաս:
8. Նախագծի 6-րդ հոդվածի համաձայն օրենքի 10-րդ հոդվածը լրացվում է 3-րդ մասով, որի համաձայն. «Ազգային մարմինը հանդիսանում է սույն օրենքով նախատեսված ֆիլմ հանձնակատարի գործառույթներ իրականացնող մարմին:»:

Այդ առումով հարկ է նշել, որ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն. «**Ֆիլմ հանձնակատար՝** Հայաստանի Հանրապետության՝ որպես ֆիլմարտադրության համար բարենպաստ երկրի, գրավչությունը խթանելու և տարածելու, ինչպես նաև **ֆիլմարտադրության տարբեր փուլերում ֆիլմարտադրողներին աջակցություն ցուցաբերելու գործառույթներ իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.»:**

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության հիմնադրած մշակութային **հիմնադրամ է**, որն ունի բացառիկ լիազորություններ պետական ֆինանսավորման նպատակով մրցույթներ (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպելու և անցկացնելու գործում:

2. Ազգային մարմինը հանդիսանում է աջակցող և չի կարող ձեռք բերել գույքային իրավունքներ իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ, ինչպես նաև **չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսավարող սուբյեկտի միջոցով**, որում ունի բաժնեմասնակցություն կամ հնարավորություն՝ կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման վրա:»:

Հետևապես, ֆիլմ հանձնակատարն իրականացնում է ֆիլմարտադրության տարբեր փուլերում **ֆիլմարտադրողներին աջակցություն ցուցաբերելու գործառույթներ,** իսկ Ազգային մարմինը՝ իրավաբանական անձ է և չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսավարող սուբյեկտի միջոցով:

Բացի այդ օրենքի 9-րդ հոդվածում սահմանվում են **Ազգային մարմնի լիազորություն-ները, որոնցում խոսք չի գնում** ֆիլմարտադրության տարբեր փուլերում ֆիլմարտադրողներին աջակցություն ցուցաբերելու գործառույթների մասին:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ Ազգային մարմինը չի կարող հանդիսանալ ֆիլմ հանձնակատար:

9. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածում «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:
10. Օրենքի նախագծի 7-րդ հոդվածում, նոր խմբագրությամբ շարադրվող 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է «ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ցանկը» հասկացությունը, որի կիրառման համար անհրաժեշտ է խմբագրել գործող օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը: Միաժամանակ 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Ազգային մարմինը պետք է վերլուծի յուրաքանչյուր հայտ և սահմանի վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների և աշխատանք-ների ցանկը: Մինչդեռ նշված ցանկը պետք է նախապես սահմանված լինի և

Ազգային մարմինը պետք է դիտարկի յուրաքանչյուր հայտի համապատասխանությունն առկա ցանկի հետ: Այլ կերպ ասած, ֆիլմարտադրողն ի սկզբանե պետք է ծանոթ լինի նշված ցանկին, հետո նոր դիմի Ազգային մարմին, որը կստուգի այդ համապատասխանությունը:

11. Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, հետ են գանձվում պետական բյուջե, եթե հիմնավորված փաստերով բացահայտվում է, որ սույն հոդվածի առաջին մասով սահմանված վերադարձ ստացած (ստացող) ֆիլմարտադրողը.

1) ներկայացրել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.»:

Ֆիլմարտադրողին ներդրումների մասնակի վերադարձ տրամադրելու կապակցությամբ լիազորված պետական մարմնին եզրակացություն ներկայացնելուց (այսուհետ՝ եզրակացություն, նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ կետ) հետո Ազգային մարմինը պետք է ունենա հանապատասխան լիազորություններ՝ ֆիլմարտադրողի կողմից ներկայացված փաստաթղթի կեղծ լինելու հանգամանքը կամ տեղեկատվության հավաստիությունը պարզելու, հետևաբար անհրաժեշտ է հստակեցնել Ազգային մարմնի լիազորությունները և մշտադիտարկում իրականացնելու գործիքակազմը:

12. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետը լրացվում է նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «ֆիլմարտադրության աշխատանքների ընթացքում կատարել է ապօրինի գործողություն կամ այնպիսի գործողություն, որը հասցրել է գույքային մասնակի կամ լրիվ ոչնչացման:», *սահմանումը հստակեցման կարիք ունի, քանի որ ֆիլմարտադրության ընթացքում սցենարական մտահղացմամբ պայմանավորված կարող են ոչնչացվել տարբեր ապրանքներ, ներառյալ՝ մեքենաներ:*

13. Օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում կամ դադարեցվում է լիազորված պետական մարմնի որոշումով՝ Ազգային մարմնի եզրակացության հիման վրա, իսկ ներդրումների մասնակի վերադարձ ստացած ֆիլմարտադրողից հատկացված միջոցները հետ են գանձվում դատարանի որոշման հիման վրա»: Նման խմբագրման

դեպքում կարելի է խուսափել տարրընմբռնումներից, հակառակ դեպքում ներկայացված սահմանումով ստացվում է, որ՝

- ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում կամ դադարեցվում է լիազորված պետական մարմնի որոշումով՝ Ազգային մարմնի եզրակացության հիման վրա կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա, այն դեպքում, երբ ներդրումների մասնակի վերադարձի ապահովման գործընթացը լիազորված պետական մարմնի իրավասությունների շրջանակում է և դատական ակտի կարիք չկա,
- դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտից հետո լիազորված պետական մարմինն իրավասու չէ որոշում կայացնելու:

14. Նախագծի 7-րդ հոդվածով խմբագրվող օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետն անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես, պարզաբանման կարիք ունի թե ինչ «անարժանահավատ փաստերի ու տեղեկությունների» մասին է խոսքը, ինչպես են դրանք հավաստելու: Այդ առումով կարծում ենք, որ դրույթն անհրաժեշտ է համապատասխանեցնել նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներին, միաժամանակ, հոդվածի 6-րդ մասն անհրաժեշտ է նախատեսել որպես 5-րդ մասի 3-րդ կետ:

15. Նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթներ, որոնց համաձայն անհրաժեշտ է սահմանել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 412 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ
ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրա- պետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-528-09.03.2023-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ
13.04.2023

Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-528-09.03.2023-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-302-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 16-րդ, 18-րդ եւ 19-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել .

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 23.1-րդ կետով.

«23.1) ներդրումների մասնակի վերադարձ (cashback)՝ ֆիլմարտադրողների կողմից ՀՀ ռեզիդենտ անձանցից, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից, ձեռք բերված ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների եւ ծառայությունների համար կատարված դրամական ծախսերի մասնակի հետ վերադարձ.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ. 1.1-ին կետով.

«1.1) ֆիլմարտադրության մեջ ներդված դրամական միջոցների մասնակի վերադարձը.»

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու, դադարեցնելու եւ բողոքարկելու կարգն ու պայմանները.»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) ազգային մարմնի ներկայացված ներդրումների մասնակի վերադարձի մասին եզրակացությունների եւ վերադարձը տրամադրելու հիմքերի ուսումնասիրության տվյալների հիման վրա որոշում է կայացնում վերադարձը տրամադրելու կամ մերժելու, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու մասին.»:

2) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) իրականացնում է պետական բյուջեից եւ դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման մոնիտորինգ (մշտադիտարկում).».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12.1-րդ կետով.

«12.1. ուսումնասիրում է ներդրումները մասնակի վերադարձնելու, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, նաեւ՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու եւ վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն լիազոր պետական մարմնին՝ համապատասխան որոշում կայացնելու համար.»:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3. Ազգային մարմինը հանդիսանում է սույն օրենքով նախատեսված ֆիլմ հանձնակատարի գործառույթներ իրականացնող անձ:»:

Հոդված 7. Օրենքի Գլուխ 6-ում՝

1) Վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՄ ԴՐԱ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԵՏԳԱՆՁՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՎԱՐՁՈՒԹԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ»

2) 18-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 18. Ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը, մերժումը, դադարեցումը, հետգանձումը*

1. Ֆիլմարտադրության նպատակով ներդրվող դրամական ծախսերի առնվազն քսան տոկոսը կարող է հետ վերադարձվել՝ եթե.

1) ֆիլմարտադրողը ներդրումները վերադարձնելու հայտով դիմել է Ազգային մարմին,

2) առկա են ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերն հիմնավորող փաստաթղթերը,

3) ազգային մարմինը ներդրումների մասնակի վերադարձ տրամադրելու մասին իր դրական եզրակացությամբ դիմել է լիազոր պետական մարմին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների ցանկը սահմանում է Ազգային մարմինը՝ յուրաքանչյուր հայտի վերլուծության հիման վրա:

3. Ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսումներում չի հաշվարկվում սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դրամագլխի հաշվին տվյալ

ֆիլմարտադրությանը հատկացված ֆինանսական միջոցների չափով կատարված ապրաքների, ծառայությունների եւ աշխատանքների ծախսերը՝ առկայության դեպքում:

4. Ներդրումների մասնակի վերադարձ ստանալու հայտը մերժվում է, եթե՝

1) հայտնի են դարձել փաստեր, որոնք հավաստում են, որ ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը իր գործունեության ընթացքում ոչնչացրել կամ վնասել է պետության պահպանության տակ գտնվող պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, հնագիտական օբյեկտները, խախտել է պետության կողմից հատուկ պահպանվող բնական տարածքի կամ օբյեկտի օրենսդրությամբ սահմանված ռեժիմը՝ առաջացնելով քրեական օրենսդրությամբ սահմանված խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս, կամ հրաժարվել է հատուցել հանրային կամ մասնավոր անձանց գույքին պատճառված վնասը կամ վերականգնել դրա նախկին վիճակը:

5. Ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները հետ է գանձվում պետական բյուջե, եթե ազգային մարմնի մշտադիտարկման կամ այլ հիմնավորված փաստերով բացահայտվում է, որ սույն հոդվածի առաջին մասով սահմանված վերադարձ ստացած (ստացող) ֆիլմարտադրողը.

1) ներկայացրել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

6. ֆիլմարտադրության աշխատանքների ընթացքում կատարել է ապօրինի գործողություն կամ այնպիսի գործողություն, որը հասցրել է գույքայի մասնակի կամ լրիվ ոչնչացման:

7. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում, դարադեցվում եւ պետական բյուջե է վերադարձվում լիազորված պետական մարմնի որոշումով՝ ազգային մարմնի եզրակացության կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

8. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը եւ ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկն ու ձեւաչափը, ինչպես նաեւ վերադարձը մերժելու, դադարեցնելու եւ պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) եւ բողոքարկելու ընթացակարգերը սահմանվում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով սահմանված Կառավարության որոշումով:»:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով ներդրումներ կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ մասնակի վերադարձ՝ համաձայն սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթների:».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:»:

Հոդված 9. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1.-րդ մասով.

«4.1. Մինչեւ սույն օրենքով սահմանված Ազգային մարմնի կազմավորումը ներդրումների մասնակի վերադարձի տրամադրման, մերժման եւ այդ գործընթացի դադարեցման հետ կապված գործառույթներն իրականացնում է լիազորած պետական կառավարման մարմինը:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանում կինոարտադրության ոլորտի զարգացմանը եւ ներդրումների խթանմանը միտված պետական քաղաքականության երաշխիքները բարելավելու եւ առավել գրավիչ մեխանիզմներ սահմանելու հանգամանքով:

Ներկայումս գործող օրենքով, որպես Հայաստանում ֆիլմարտադրությանը օժանդակող պետական աջակցության, սահմանված է հավաստագիր տրամադրելու միջոցով ներդրողներին՝ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքից օգտվելու հնարավորությունը: Սակայն գործող մեխանիզմը կիրառվում է ֆիլմարտադրության նպատակով ներդրում կատարող անձի նախնական նախահաշվի հիման վրա՝ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայություններ մատուցող մատակարար հանդիսացող, ՀՀ պետական գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտ միջոցով:

Կինոարտադրության եւ կինեմատոգրաֆիայի ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ծավալված մտքերի փոխանակության հիմնական առանցքը այն հիմնավորումն էր, որ առկա կարգավորումը ներդրումները խթանելու բավարար գրավչություն չի առաջացրել եւ փաստացի շահառուներ չեն եղել:

Որպես առավել ընդունված արդյունավետ տարբերակ առաջադեմ երկրներում կիրառվում է ներդրումների մասնակի վերադարձի մոդելը: Ոլորտի մասնագետների ներկայացրած

մեկնաբանությունները եւ հետագայում հեղինակների կատարած ուսումնասիրությունները բավարար հիմք ընդունվեց օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու համար:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենքի նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել հավաստագիր տրամադրելու, մատակարարի միջնորդավորված ծառայություններից օգտվելու եւ ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու հաշվարկային մոտեցումը:

Կարգավորումը փոխարինվում է՝ ներդրումների մասնակի վերադարձի (cashback) միջոցով պետության աջակցության ձեւով: Նոր կարգավորումով սահմանվում է, որ ֆիլմարտադրողի (ներդրողի) ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների եւ ծառայությունների համար կատարված դրամական ծախսերը կարող են մասնակի հետ վերադարձնել այն ծախսային 20%-ի հաշվարկով, որը կատարել է ՀՀ ռեզիդենտ անձանցից, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից:

Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է ամբողջությամբ խմբագրել 18-րդ հոդվածը՝ սահմանելով ներդրումները մասնակի հետ վերադարձնելու դեպքերը, հետվերադարձի ենթակա ծախսերը հաշվարկելու կամ ծախսերում չներառելու պայմանները, ներդրումների մասնակի վերադարձ ստանալու հայտը մերժելու, փուլային վերադարձը դադարեցնելու, իսկ հատկացված միջոցները պետական բյուջե հետ գանձելու դեպքերը:

Առավել ուշագրավ է վերադարձը մերժելու կամ դադարեցնելու դեպքերից մեկը, երբ ֆիլմարտադրողը իր գործունեության ընթացքում ոչնչացրել կամ վնասել է պետության պահպանության տակ գտնվող պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, հնագիտական օբյեկտները, խախտել է պետության կողմից հատուկ պահպանվող բնական տարածքի կամ օբյեկտի օրենսդրությամբ սահմանված ռեժիմը՝ առաջացնելով քրեական օրենսդրությամբ սահմանված խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս, կամ հրաժարվել է հատուցել հանրային կամ մասնավոր անձանց գույքին պատճառված վնասը կամ վերականգնել դրա նախկին վիճակը:

Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում, դարադեցվում եւ պետական բյուջե է վերադարձվում լիազորված պետական մարմնի որոշումով՝ ազգային մարմնի եզրակացության կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը եւ ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկն ու ձեւաչափը, ինչպես նաեւ վերադարձը մերժելու, դադարեցնելու եւ պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) եւ բողոքարկելու ընթացակարգերը սահմանվում է Կառավարության որոշումով:

3. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագիծը ընդունելու արդյունքում առավել կբարձրանա Հայաստանում կինոարտադրության ոլորտում ներդրումների գրավչությունը, ինչն էլ կնպաստի կինոարդյունքի որակի բարձրացմանը եւ ոլորտի զարգացմանը: